

## Մերի Նաջարյան

### ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՇՏԵՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԸ

Բանալի բառեր - Հայաստան, Թուրքիա, ԱՄՆ, Հայոց ցեղասպանություն, հաշտեցման հանձնաժողով, հասարակական երկխոսություն, քաղաքական համագործակցություն:

Հայաստանի անկախության վերականգնումը շրջադարձային նշանակություն ունեցավ հայ ժողովրդի բազմադարյա պատմության մեջ: Իբրև միջազգային հարաբերությունների սուբյեկտ, Հայաստանի Հանրապետությունը պետք է մշակեր իր արտաքին քաղաքական հայեցակարգը: Այդ համատեքստում ամենաբարդը հայ-թուրքական երկկողմ հարաբերությունների օրակարգի ձևավորումն էր:

1991թ. դեկտեմբերի 16-ին Թուրքիան ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը, սակայն դիվանագիտական հարաբերություններ չհաստատեց պաշտոնական Երևանի հետ՝ առաջ քաշելով հարաբերությունների կարգավորման ապօրինի մի շարք նախապայմաններ: Դրանցից էին՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումից ու պահանջատիրությունից, Արցախյան հիմնահարցի դրական լուծումից հրաժարում և սփյուռքահայության հակաթուրքական գործունեության դադարեցում, Կարսի պայմանագրի ճանաչում<sup>1</sup>:

Ի տարբերություն Թուրքիայի, ՀՀ-ն հանդես եկավ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատելու օգտին: Սակայն Թուրքիային դիվանագիտության մեջ ներգրավվելու փորձերը չիրականացան և Թուրքիան մինչև այժմ էլ չարունակում է դիվանագիտական հարաբերություններ չունենալ Հայաստանի հետ ու պնդել իր առաջ քաշած նախապայմանները:

Թուրքիայի նման դիրքորոշումը բացատրվում էր նրանով, որ դեռևս 1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից ընդունած Անկախության մասին հռչակագրի 11-րդ կետում նշված է, որ Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915թ. օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին<sup>2</sup>:

<sup>1</sup> Տ'ես **Հովհաննիսյան Ն.**, Մերձավորարևելյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», թիվ 16, Երևան, 1996, էջ 14:

<sup>2</sup> Տ'ես **Մինասյան Է.**, Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003թթ.), Երևան, 2003, էջ 246:

Ռուս հեղինակ Ա.Ա. Կրուտովի և Ա.Մ. Խալմուխամեդովի կարծիքով հռչակագիրը փաստորեն չեղյալ հայտարարեց Թուրքիայի հետ խորհրդային իշխանությունների հաստատած սահմանը, ինչը կարող էր դիտվել որպես տարածքային պահանջ Կարսի և Արդահանի շրջանների նկատմամբ<sup>1</sup>:

Երկու երկրների միջև ստեղծված դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում փորձարկվեցին հասարակական դիվանագիտության, կամ, այլ կերպ ասած, երկրորդային դիվանագիտության միջոցով երկխոսություն հաստատելու հնարավորությունները: Այդպիսի երկխոսություն իրականացնող միավոր պիտի դառնար Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովը<sup>2</sup>:

ԹՀՀՀ-ն երկրորդային դիվանագիտության ամերիկյան մոդելի տեղայնացումն էր: Հանձնաժողովի աշխատանքները լայնորեն քննարկվեցին Հայաստանում, Սփյուռքում և Թուրքիայում: Համաձայն որոշ լավատեղյակ աղբյուրների՝ բանակցությունները սկսվել են առնվազն 2001թ. գարնանը, սակայն այդ մասին հրապարակավ հայտարարվեց ավելի ուշ՝ 2001թ. հուլիսի 9-ին<sup>3</sup>: Ստեղծման պահին այն միավորում էր վեց թուրք և չորս հայ գործիչների: Հայկական կողմը ներկայացնում էին Ալեքսանդր Արզումանյանը (ՀՀ նախկին արտգործնախարար և ՀՀԾ կուսակցության առաջնորդ), Դավիթ Հովհաննիսյանը (Սիրիայում 1992-1998թթ. ՀՀ նախկին դեսպան, հատուկ հանձնարարություններով դեսպան), Անդրանիկ Միհրանյանը (քաղաքագետ, Ռուսաստանի հայերի միության վարչության անդամ) և Վան Գրիգորյանը (Ամերիկայի հայկական համագումարի հոգաբարձուների խորհրդի նախագահ): Թուրքական կողմից ընդգրկված էին նախկին դեսպան Գյունդուզ Աքթանը, Ուսթուն Էրգուդերը, ավիացիայի գեներալ-լեյտենանտ Սադի Էրգուվենչը, նախկին փոխարտգործնախարար Օզդեն Սանբերկը, հոգեբան Վամըկ Վոլկանը, թուրքական արտաքին գործերի գերատեսչության նախկին ղեկավար Իլթեր Թուրքմենը:

Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեությունը մեծ վրիպումով կարելի է համարել իրական հասարակական երկխոսություն: Առաջին իսկ օրվանից ԹՀՀՀ-ի նկատմամբ մոտեցումները միանշանակ չեն եղել: Հանձնախմբի ծպտյալ աշխատանքը և նրա շուրջ ստեղծված բարոյահոգեբանական կասկածելի մթնոլորտը խորացրին հետագա ձախողումները: Հայտարարելով, թե քննարկումների համար «տաբուներ չկան», հանձնաժողովականները հաճախ ձեռք էին մեկնում այնպիսի հարցերի, որոնք վեր էին իրենց իրավասությունից, պահանջվում է պատասխանատվություն և մասնագիտական մոտեցում: Ավելին, ԹՀՀՀ-ի

<sup>1</sup> Տ'ես Ա. Ա. Կրտով, А.М. Халмухамедов, Армения-Турция: Противостояние или сотрудничество? տ'ես Армения: проблемы независимого развития/ Под общ. Ред. Е. М. Кожокина/, Москва, 1998, с. 450:

<sup>2</sup> Կազմակերպության պաշտոնական համացանցային կայքի բացման մասին հայտարարվել է 2004թ. հունվարի 12-14 ԹՀՀՀ-ի Լոնդոնում կայացած հանդիպման ժամանակ: Տ'ես <http://www.tarc.info>:

<sup>3</sup> Հանձնաժողովի գործունեության հանգամանակի անդրադարձը տ'ես **Անանյան Ա.**, Հայ-թուրքական երկխոսության նոր փորձ (Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության մասին), Երևան, 2003, էջ 28:

գործունեությունը սկսեց շահարկվել ի վնաս Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի: Հանձնաժողովի հայ անդամները այդպես էլ չհասկացան, որ իրենց թուրք գործընկերները ի զորու չեն հրաժարվելու տարիներ շարունակ որդեգրած ժխտման բարդությից: Թուրքերը չունեցան բավարար քաղաքական խիզախություն՝ հաղթահարելու պատմության սեփական թյուրըմբռնումը: Հավելյալ խոչընդոտ էր աշխատանքներում ԱՄՆ Պետդեպարտամենտի ներգրավվածությունը:

Ակնհայտորեն պարզ էր, որ ԹՀՀՀ-ի ստեղծումը բխում էր ԱՄՆ շահերից: Եվ չնայած ի սկզբանե արված էր ամեն ինչ նմանօրինակ ենթադրությունները բացառելու համար, այդուհանդերձ այդ գործընթացում իրական մասնակիցները երևացին այն բանից հետո, երբ «Կոնգրեսական հետազոտությունների ծառայությունը» 2001թ. հոկտեմբերի 2-ի «Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովը և ԱՄՆ-ի դերը» հաղորդագրության մեջ նշեց, որ «ԱՄՆ Պետդեպարտամենտը ֆինանսական օժանդակություն է տրամադրում ԹՀՀՀ-ի գործունեությանը»<sup>1</sup>: Ինչպես նշել էր «Ազգ» օրաթերթին այդ տեղեկատվությունը տրամադրած ՀՀՀ Հայ դատի Վաշինգտոնի գրասենյակի մամլո պատասխանատու Եղիսաբեթ Չուլջյանը, ԱՄՆ-ի Պետդեպարտամենտը ֆինանսական օժանդակություն է տրամադրել, բայց անուղղակիորեն գումար տրամադրել է Վաշինգտոնի ամերիկյան համալսարանին, վերջինս հակամարտությունների կարգավորման ծրագրի շրջանակներում՝ դրամաշնորհի ձևով այն փոխանցել է ԹՀՀՀ-ին: Եվ չնայած հաղորդագրության մեջ գումարի չափը չի նշվել, սակայն թերթը Մոսկվայից՝ «Ռուսաստանի հայերի միություն» կազմակերպությանը մոտ աղբյուրից տեղեկացել է, որ դա համարժեք էր Նոբելյան մրցանակի գումարին<sup>2</sup>: Ուշագրավ է նաև այն փաստը, որ նախագահական ընտրություններում հաղթանակ տանելուց հետո Ջորջ Բուշ կրտսերի հանրապետական վարչակազմը առանձնակի հետաքրքրություն ցուցաբերեց Արցախի հակամարտության խաղաղ կարգավորման նկատմամբ: Այդ համատեքստում էլ 2001թ. ապրիլին կազմակերպվել էին հայ-ադրբեջանական բանակցություններ Քի Վեսթում<sup>3</sup>: Հիրավի, տարածաշրջանային շահերից ելնելով՝ ԱՄՆ-ը ձգտում էր ամերիկյան մոդելի «ստատուս քվո» հաստատել Կովկաս-կենտրոնասիական աշխարհագրական գոտում: Միացյալ Նահանգներում գիտակցում էին, որ հայ-ռուսական ռազմաքաղաքական ակտիվ համագործակցության էական խթաններից մեկը Թուրքիայի կողմից Հայաստանին սպառնացող ռազմական ներխուժման վտանգն է: Ամերիկյան տեսանկյունից՝ հայ-թուրքական հաշտեցումը կթուլացնի պաշտոնական Երևանի կախվածությունը մոսկովյան թելադրանքից: Ուստի աջակցելով ԹՀՀՀ-ին՝ ԱՄՆ-ի վարչակազմը փաստորեն

<sup>1</sup> «Ազգ», 16/10/2001:

<sup>2</sup> Նույնը, 18/10/2001:

<sup>3</sup> Տե՛ս **Անանյան Ա.**, Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը հայ-թուրքական հարաբերություններում (1991-2004թթ.), Երևան, 2006, էջ 81:

հնարավորություն է ստանում հետագայում հեշտորեն ազատվել Կոնգրեսում Հայոց ցեղասպանության հարցի արծարծումից և ամերիկա-թուրքական հարաբերությունների անընդհատ սրումից:

ԹՀՀ-ի ստեղծման մասին այլ տեսակետ ունեին երկխոսության թուրք մասնակիցները: Վերջիններս գտնում էին, որ հանձնաժողովի ստեղծման մտահաղացումը առաջ էր եկել 2000 թ. աշնանը, երբ կտրուկ սրվել էին ԱՄՆ-Թուրքիա և Ֆրանսիա-Թուրքիա հարաբերությունները՝ կապված վերոհիշյալ պետությունների կողմից Հայոց ցեղասպանության փաստի ճանաչման հետ<sup>1</sup>:

Անդրադառնալով ԹՀՀ-ի ստեղծման վերաբերյալ ձևավորված հասարակական կարծիքին՝ պետք է փաստել, որ Հաշտեցման հանձնաժողովի ստեղծումը Հայաստանում և Սփյուռքում սառն ընդունելության արժանացավ: Ամերիկյան արձագանքը լավատեսությամբ էր համակված, իսկ թուրք հասարակական կարծիքը՝ զուսպ-լավատեսական<sup>2</sup>: Ավելին, հանձնաժողովի թուրք անդամները միաբերան պնդում էին, որ կողմերի մոտեցումների մեջ ոչինչ չի փոխվել. եթե հայերը չեն հրաժարվել ցեղասպանության իրենց «մեղադրանքներից», չէր փոխվել նաև թուրքական կողմի վերաբերմունքը<sup>3</sup>: Հանձնաժողովի անդամ Գյունդուզ Աքթանը հայտարարում էր, թե անհնար է, որ Թուրքիան երբևէ ճանաչի 1915թ. դեպքերը որպես ցեղասպանություն: Թուրք անդամների՝ մամուլին տված հարցազրույցները հանգում էին մի իրողության. հասարակությունը Օսմանյան կայսրությունում հայերի եղեռնը չի համարում ցեղասպանություն<sup>4</sup>:

Հայաստանի իշխանությունները հապաղեցին հանձնաժողովի վերաբերյալ կարծիք հայտնել, և միայն հուլիսի 14-ի ՀՀ ԱԳՆ-ի խոսնակը բարձրաձայնեց պաշտոնական Երևանի տեսակետը, որում մասնավորապես ասվում էր. «ՀՀ արտաքին գործերի նախարարությունը բացարձակապես առնչություն չունի»<sup>5</sup>: Հայտարարությունում ասվում էր նաև, որ հանձնաժողովի անդամ, Սիրիայում ՀՀ նախկին դեսպան Դավիթ Հովհաննիսյանը չի հանդիսանում ՀՀ ԱԳՆ ներկայացուցիչ: Հայաստանի պաշտոնական տեսակետը, բավական ուշացած, հրապարակվեց նաև ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Արման Կիրակոսյանի կողմից: Դեսպանը նշում էր, որ Հայաստանի իշխանությունները տեղեկացված են եղել նախաձեռնության մասին, սակայն չեն միջամտել գործընթացին: Միևնույն ժամանակ, հայաստանյան իշխանությունների կարծիքով, Թուրքիայի հարաբերությունների բարելավումն ավելի արդյունավետ կլիներ երկու պետությունների կառավարությունների ուղղակի երկխոսության միջոցով: Իր

<sup>1</sup> «Երկիր», 21/07/2001:

<sup>2</sup> Տե՛ս Անանյան Ա., Հայ-թուրքական երկխոսության նոր փորձ (Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության մասին),..., ԵՎ.աշխ., էջ 35:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 46:

<sup>4</sup> «Turkish Daily News», 11/07/2001:

<sup>5</sup> «Հայաստանի Հանրապետություն», 14/07/2001:

հերթին ՀՀ նախագահի խոսնակը հայտարարեց, որ Հայաստանի բարձրագույն ղեկավարությունը և անձամբ նախագահ Ռ. Քոչարյանը տեղյակ են եղել հանձնաժողովի ստեղծման մասին և «չեն խոչընդոտել երկխոսությանը, քանզի հասարակական երկխոսությունը համարում են ընդունելի»<sup>1</sup>:

Որքան էլ ՀՀ իշխանությունները փորձեցին ժխտել այդ հանձնաժողովում իրենց գործունեությունը և մասնավորապես հայկական կողմից ՀԹՀՀ անդամ, ՀՀ Արտգործնախարարության նախկին աշխատակից Դավիթ Հովհաննիսյանի հետ իրենց ունեցած կապը, ակնհայտ էր, որ Հայաստանի ղեկավարությունը ոչ միայն տեղյակ էր տարվող բանակցություններին, այլև վերահսկում էր դրանք: Հետաքրքրական է, որ ՀԹՀՀ-ի գործունեությանը զուգահեռ՝ նկատվեց հայկական կողմից ցեղասպանության թեմայով բանավեճի մեջ ներքաշելու միտում և թուրքական և եվրոպական ու ամերիկյան զանազան կազմակերպությունների, գիտահետազոտական կրթական կառույցների կողմից: Հստակ երևում էր, որ հայերին գիտական բանավեճի մեջ ներքաշելով, առավել ևս նրանց հետ «հաշտվելով»՝ թուրքական դիվանագիտությունը լուծում էր մի քանի խնդիր. նախ՝ հայ գիտնականները, մասնավորապես պատմաբանները, նստելով գիտական բանավեճի թուրքերի հետ եղեռնի հարցի շուրջ՝ ականալից հայտնվում էին «գրոյական վիճակում» և ականալից նույնպես կանգնում ցեղասպանության իրողությունը կասկածի տակ առնողների դիրքերում: Երկրորդ, թուրքական կողմը հրաշալի հնարավորություն էր ստանում աշխարհին համոզելու, որ առայժմ, կարիք չկա խորհրդարանական կամ այլ մակարդակով անդրադառնալ հայ-թուրքական խնդրին: Երբ կավարտվեն բանավեճերը, կգտնվեն դրանց լուծումները, նոր միայն կարելի է արժարժեք խնդիրը: Ինքնին հասկանալի է, որ Արևմուտքի գործուն մասնակցությամբ հայկական կողմի համար պատրաստվում էր ծուղակ:

Այս և նմանօրինակ այլ հայտարարություններ հիմք հանդիսացան, որ հայ հասարակական կարծիքը ավելի ամրանա իր այն համոզմունքի մեջ, թե թուրքական իշխանությունները փորձում են հանձնաժողովի աշխատանքների միջոցով վիժեցնել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը: Եվ ձևավորված բացասական վերաբերմունքը ստիպեց, որ հանդես գան հատուկ հայտարարությամբ, ինչը նրանք արեցին 2001թ. օգոստոսի 2-ին<sup>2</sup>: Հեզնելով ավանդական կուսակցությունների մոտեցումները՝ հանձնաժողովի հայ անդամները խոստացան հետագայում հրապարակորեն գործելու:

Ինչևէ, 2001թ. սեպտեմբերի 23-25-ին Ստամբուլում կայացավ ԹՀՀՀ-ի երկրորդ հանդիպումը, որին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները: Քննարկվեց

<sup>1</sup> «Նոյյան տապան», 13/07/2001:

<sup>2</sup> «Ազգ», 2/08/2001:

հանձնաժողովի գործունեության ընթացքը, վերլուծվեցին մամուլի հրապարակումները, ի մասնավորի՝ ընդունվեցին ՁԼՄ-ների հետ շփումների «կառուցողական սկզբունքները»: Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի ունեցավ 2001 թ. նոյեմբերի 18-ին Նյու Յորքում: Որոշվեց դիմել Անցումային արդարադատության միջազգային կենտրոն (ԱԱՄԿ)՝ Հայոց ցեղասպանության նկատմամբ 1948թ. «ՄԱԿ-ի Ցեղասպանության մասին կոնվենցիայի» կիրառելիության հարցով:

2001թ. դեկտեմբերի 11-ին հանձնաժողովի հայ անդամները հանդես եկան համատեղ հայտարարությամբ, ըստ որի առժամանակ սառեցնում են իրենց անդամությունը ԹՀՀ-ին, քանզի թուրք գործակիցները միակողմանիորեն հանձնարարել են ԱԱՄԿ-ին՝ դադարեցնել նախապես համաձայնեցված ուսումնասիրությունը<sup>1</sup>: Թուրքերի նման վարքագիծը վերստին ապացուցեց, որ նրանք ամեն զնով առաջ են տանելու ցեղասպանության ժխտման իրենց կարծի դիրքորոշումը: Ի դերս ելան նաև հայ անդամների պնդումները, թե իրենք թուրքերի հետ համախոհների թիվ են:

Զնայած փոխադարձ մեղադրանքներին՝ Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովը որոշ ժամանակ անց կրկին հավաքվեց բանակցային սեղանի շուրջը: Հերթական նիստը տեղի ունեցավ 2002թ. հունիսի 11-13-ին՝ Բողրում առողջարանային քաղաքում: Քննարկվեցին նախորդ հանդիպումների «ձեռքբերումները», ինչպես նաև Կարս-Գյումրի երկաթուղու շրջափակման հարցը և այլն: Հանձնաժողովի անդամները վերահաստատել են իրենց որոշումը՝ դիմելու Անցումային արդարադատության միջազգային կենտրոնին, այդ առնչությամբ ընդունվել է փոխընթացման հուշագիր<sup>2</sup>: ԹՀՀ-ն, սակայն, չէր կատարել հիմնադիր փաստաթղթի պահանջը՝ իր իսկ աշխատանքների գնահատումը, որը պիտի կատարվեր հանձնաժողովի ստեղծումից մեկ տարի անց: Բողրումում չեն ճշտվել ԹՀՀ-ի հաջորդ հանդիպումն անցկացնելու վայրը և ժամանակը<sup>3</sup>:

Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի բողրումյան հանդիպումը մամուլում քիչ լուսաբանվեց, իսկ ԹՀՀ-ի գործունեությունը ձգձգվեց մեկ ամբողջ տարի՝ կապված Թուրքիայում և Հայաստանում խորհրդարանական և նախագահական ընտրությունների և տարածաշրջանային արմատական զարգացումների հետ:

2003թ. փետրվարի 10-ին հայտնի դարձավ, որ Անցումային արդարադատության միջազգային կենտրոնը ավարտել է իր ուսումնասիրությունները և եկել է այն եզրահանգման, որ 1915թ. իրադարձությունները կարող են որակվել իբրև

<sup>1</sup> «Տարեգիր», 11/12/2001, տես [www.taregir.am](http://www.taregir.am), նաև «Առավոտ», 13/12/2001:

<sup>2</sup> Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին Միավորված Ազգերի Կազմակերպության կոնվենցիայի կիրառելիությունը քաներորդ դարի սկզբին տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ: Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի համար պատրաստված իրավական վերլուծություն, 10/02/2003, էջ 1:

<sup>3</sup> «Ազգ», 17/7/2002:

ցեղասպանություն, սակայն 1948թ. Կոնվենցիան չի կարող կիրառվել Առաջին աշխարհամարտի ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ: Այս երկդիմի եզրակացությունն անգամ առիթ դարձավ, որ երկու թուրք անդամ լքեն հանձնախումբը:

2003թ. հաշտեցման հանձնաժողովի նիստեր տեղի ունեցան Լոնդոնում<sup>1</sup> և Ստամբուլում<sup>2</sup>: Չնայած Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի որոշ անդամների լավատեսությանը, արդեն առաջացել էին լուրջ հիմնախնդիրներ: Դժբախտաբար հայկական կողմը, հակառակ իր բոլոր հավաստիացումներին, որ Չայ դատի և ցեղասպանության հարցում որևէ զիջում չի լինելու, ի վերջո հայտնվեց ծանր ու խաբված վիճակում և հարկադրված եղավ 2003թ. վերջերին հակվել դեպի տխրահռչակ հանձնաժողովի գործունեության դադարեցումը: ՀԹՀՀ-ի հայ անդամները իրենց գործելաճի ձախողումը քողարկելու նպատակով հանդես եկան հայտարարությամբ, թե իբր հանձնաժողովի գործունեությունն ունեցել է որոշակի դրական հետևանք, և իրենք որոշակի քայլ են կատարել հայ-թուրքական լարվածության թուլացման ուղղությամբ: ԹՀՀՀ-ն լքած թուրք անդամների փոխարեն՝ ընդգրկվեցին նորերը: Այս ամենը հասարակական երկխոսության ընթացքի մեջ բեկում չմտցրեց, իսկ 2004թ. Լոնդոնում և Մոսկվայում նիստեր գումարելուց հետո ԹՀՀՀ-ն հայտարարեց ինքնալուծարման մասին:

Իրականում այդ անփառունակ հանձնաժողովը զգալի վնասներ հասցրեց միջազգային Չայ դատի ճանաչման գործին: Եղան դեպքեր, երբ տարբեր երկրների խորհրդարաններ իրենց օրակարգերից հանեցին Չայոց ցեղասպանությանը վերաբերող բանաձևերի նախագծերը՝ ՀԹՀՀ-ի աշխատանքների ավարտին սպասելու պատճառաբանությամբ: Պատահական չէ, որ ՀԹՀՀ-ի գործունեության ընթացքում (2001-2003թ. նոյեմբեր) ոչ մի երկիր չքննարկեց ու չճանաչեց Չայոց եղեռնը:

Կարծում ենք, որ Չայ դատի հետապնդման իմաստով 2001-2003 թթ. անպտուղ երեք տարիների համար մեղքի որոշակի բաժին ունեն նաև Չայաստանի իշխանությունները, որոնք զանազան ճնշումների ազդեցությամբ հակվել էին դեպի հայ-թուրքական «հաշտեցումը» և առանց նախապայմանի Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու, սահմանը բացելու անհեռանկար քաղաքականությունը, երբ անհրաժեշտ էր մեծապես շահագրգիռ սփյուռքյան զանազան կառույցների հետ մշակել Չայ դատի ընդհանուր հայեցակարգ, որն այսօր էլ դժբախտաբար, գոյություն չունի:

<sup>1</sup> «Հայկական ժամանակ», 8/5/2002:

<sup>2</sup> «Ազգ», 26/4/2002:

Այսպիսով, հայ-թուրքական հարաբերությունները ներկա համաշխարհային քաղաքականության մեջ համարվում են երկկողմ ամենաբարդ հարաբերությունների օրինակ և ունեն ոչ միայն տարածաշրջանային նշանակություն, այլև մաս են կազմում համաշխարհային քաղաքական գործընթացների: Թուրքիան ի դեմս հայկական գործոնի ոչ միայն ստիպված է հաշվի առնել Հայաստանի՝ որպես տարածաշրջանային պետության գոյությունը, այլև դիմագրավել համահայկական գործոնին, սփյուռքահայության կազմակերպված պահանջատիրությանը: Այսօր ևս, ինչպես 19-րդ դարում, Հայկական հարցի շուրջ խաչաձևվում են ոչ միայն երկու պետությունների շահերը, այլև համաշխարհային քաղաքական կենտրոնների շահագրգռությունները: Քաղաքական վտանգը մեծանում է նրանով, որ արտաքին շահերի ճնշման ներքո այս հարաբերություններում առկա կոնֆլիկտը կարող է դուրս գալ բազմակողմ կոնֆլիկտների դաշտ:

Հայ դատի հետապնդման ճանապարհին անհրաժեշտ է պետական մոտեցում, որը հաջողության գրավականն է: Այսօր մենք պարտավոր ենք հստակեցնել մեր նպատակները՝ կապված ցեղասպանության ճանաչման հետ: Բազմիցս նշվել է, որ Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգային խնդիրներից է ցեղասպանության ճանաչումը, բայց դեռևս մենք չունենք գիտական, քաղաքագիտական վերլուծություն: Վերջին 50 տարում Հայ դատն առավելապես եղել է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը նպատակամղված աշխատանք: Եվ դա միանգամայն հասկանալի է, քանի որ պարտադրված է եղել մեր պետականազուրկ վիճակով: Ներկայումս հասունացել է պահն աստիճանաբար ցեղասպանության ճանաչումից շեշտադրումը տեղափոխելու բուն պահանջատիրության վրա: Ինչքան էլ անհավատալի հնչի, պահանջատիրության դաշտում մեր դիրքերն ավելի ուժեղ են և փաստարկներն՝ ավելի զորեղ, քան մինչևիսկ ցեղասպանության ճանաչման գործընթացում, քանի որ մեր տարածքային ու նյութական փոխհատուցման պահանջները խարսխված են անժամանց ու անբեկանելի իրավունքի վրա: Ավելին, Հայոց պահանջատիրությունը մարդու իրավունքի հարց է, սեփական հայրենիքից ու ազգային ժառանգությունից զրկված անհատի ու հանրության հավաքական իրավունք: Պահանջատիրության քաղաքականությունը միայն մեր ոտնահարված իրավունքների խնդիր է, ՀՀ կենսաապահովման հիմնարար պայմաններից մեկը, հայ ժողովրդի արժանապատիվ գոյության հիմքը: Ուստի այս կենսական խնդրի լուծման նպատակով ազգի բոլոր ուժերի համախմբումը դառնում է հրամայական պահանջ, առավել ևս, որ Հայոց եղեռնի ճանաչման ու Թուրքիայի կողմից հատուցման (այդ թվում՝ տարածքային) հարցը նշանակում է ազգային անվտանգության համակարգի ապահովում: Տվյալ խնդրի արժարժումը միջազգային ասպարեզում ոչ միայն Հայաստանի ժողովրդի, այլև



հայկական Սփյուռքի ապահովության երաշխիք է: Ուստի Հայ դատի հետապնդումը պետք է լինի համազգային հայեցակարգի շրջանակներում, և զգուշավորությամբ գործընթացն ուղղորդվի պետության կողմից: Անհրաժեշտ է ամեն կերպ շարունակել ցեղասպանության միջազգային ճանաչմանն ու դատապարտմանն ուղղված քայլերը՝ ընդհուպ մինչև ԱՄՆ-ի, ՄԱԿ-ի և Թուրքիայի կողմից ճանաչումը:

Հատուցման առումով խիստ կարևոր է հետևել Հայ դատին վերաբերող նորանոր երկրների խորհրդարանական որոշումների հայանպաստ ձևակերպումներին՝ մասնավորապես հայերի պատմական հայրենիքի նկատմամբ իրավունքի արձանագրմանը: Հիշենք, որ ավելի քան մեկ տասնյակից ավելի երկրների ընդունած բանաձևերից միայն Ռուսաստանի Դաշնության Պետդումայի 1995թ. ապրիլին ընդունած փաստաթղթում է հիշատակվում հայերի պատմական հայրենիք Արևմտյան Հայաստանը: Մինչդեռ մյուս որոշումներում գերակշռում է անորոշությունը, հանգամանք, որն այսօրվա Թուրքիային ազատում է եղեռնի զոհերի հարազատներին հատուցելու ամեն մի պարտավորությունից, առաջին հերթին՝ տարածքները վերադարձնելուց:

**Мери Наджарян, Деятельность Турецко-армянской комиссии по примирению и фактор Армянского геноцида** - Турецко-армянская комиссия по примирению только с большой погрешностью можно считать настоящим общественным диалогом, так как с первого дня создания турецко-армянской комиссии по примирению, подход к работе был всегда разным. Вместо того, чтобы понять и исправить ошибки прошлого, члены комиссии продолжили свою работу по той же проторенной дорожке, не понимая, что турецкие коллеги в течении многих лет не хотят отказаться от политики отрицания Армянского геноцида.

**Mary Najaryan,- Armenian-Turkish reconciliation committee activity and the Armenian genocide factor** - Armenian-Turkish reconciliation committee could be considered as a real public dialogue only with great drawback, as the approaches towards the works of ATRC have never been unequivocal from the very first day of its establishment. And instead of acknowledging and correcting mistakes of the past, the members of committee continued in the same exhausted manner without realizing that the partners are not going to give up years` denial policy of Armenian genocide.

**Մերի Նաջարյան - ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի նոր և նորագույն բաժնի հայցորդ:**